

տոնի շարականներու հրեշտակային արձագանդներով: Սովորութիւն՝ որ միշտ աւելի հաստատուած է, մասնաւոր Նախնային ընդհանուր ման մուսլ օրերէն եւ աշխարհաստան պատերազմներու սարսափներէն ետք: Բայց այս անգամ ուրիշ բոյր ունէր այս տոնը. հայրենակարօտ ծիծեռնակներու նման՝ Սուրբ Ղազար էին հասած բազմաթիւ միաբաններ, արտասահմանի դանազան առաքելայայրերէն, միասին աղօթելու, միասին օրհներգելու եւ արցունքով տօնելու Աստուածամօր յիշատակը, Մխիթարի մեծ յորելեանի փակման առիթով:

Յորելեանի նախորդ իրիկունը, Հոկտ. 21ին, (Ուրբաթ), Ս. Ղազար կը ժամանէր, մասնաւոր հրաւերի վրայ, Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Ընդհ. Արքահայրը՝ Գերպ. Գրիգորիս Վրդ. Մանեան, ընկերակցութեամբ Ընդհ. Աթոռակալ՝ Հ. Օդոստինոս Վրդ. Սեքուլեանի: Ս. Ղազարու Արքահայրը փութացած էր կայարան՝ խումբ մը միաբաններու հետ, եղբայրական սիրոյ ջերմ ողջոյնով ընդունելու քոյր Միաբանութեան ներկայացուցիչները: Յուզիչ էր այն պահը՝ երբ երկու Արքաները, ուխտակից բոլոր Հայրերուն հետ, երկիւղած լուծեան մէջ՝ ծունկի եկան Մխիթար Սեբաստացիի նըւերական շիրմին վրայ, որ դերեղման չէ՛, այլ՝ ծաղկոց մը յոյսերու, եղբայրութեան տապանակ, լուսաւորութեան սուրբ ակունք:

ՀԱՆՐԱՊԵՏԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Եւ ահա կը ծագէր 22 Հոկտեմբերի մեծ ու նուիրական օրը, որ անմոռանալի էջ մը պիտի արձանագրէր Մխիթարեան տարեգրութիւններուն մէջ: Ժամը 16ին սկսած՝ հրաւիրեալներու ընտրանի բազմութիւնը կը սկսէր լեցնել մեծ հանդիսասրահը: Վենետիկի «Զբօսաշրջային Ինքնավար Գործակալութիւն»ը (Azienda Autonoma di Soggiorno e Turismo di Venezia), բերելով իր սիրալոյս մասնակցութիւնը՝ յորելեանական մեր հանդէսին, ապահովեցած էր՝ քաղաքի Տոժական Պալատի Վերատեսուչ Մարմինն ազնիւ հաճութեամբ՝ նոյն ապարանքին ամենաշքեղ սրահներէն մէկը, Քուէար-կութիւններու Դահլիճը (Sala dello Scrutinio), որուն ոսկեճեղուն եւ նկարազարդ վեհութիւնը, Վենետիկեան դպրոցի մեծադոյն վարպետներու պատառներով օծուն, (Թիցիանոյ, Թինթորեթիոյ, Փաոլոյ Վերոնեզի, Թիեպոլոյ), շողշողուն փայլով կը ցոլացնէր Ազրիականի հզօր Դիւանային երբեմնի պերճութիւնը, յիշեցնելով հինաւորաց Դուքսերու դահլիճութեան փառքերը:

Ժամը 17-10ին՝ արդէն գրաւուած էին ընդարձակ սրահին բոլոր աթոռները, երբ Պատուոյ Հիւրերու մասնաւոր առանձնասենեակէն դէպի դահլիճ մուտք կը գործէին եկեղեցական ու քաղաքական բարձրաստիճան անձնաւորութիւնները, գլխաւորութեամբ Ուտրեխտի

Արքեպիսկոպոս եւ Հոլանտայի Առաջնորդ՝ Ն. Վ. Տ. Ծիր. Յովհաննէս Վիլյարանտսի, Նախագահ՝ Քրիստոնեաներու Միութեան Քարտուղարութեան, որ նոյն առաւօտը ժամանած էր Հռոմէն, աղնուօրէն ստանձնելով Միաբանութեան կողմէ իրեն ուղղուած հրաւերը՝ կատարելու օրուան գլխաւոր քանախօսութիւնը: Իր շուրջ՝ տեղ կը զբաւէին Ն. Գերբը. Տ. Ամենապատիւ Հմայեակ Պետրոս Ժէ. Կէտիկեան, Կաթողիկոս-Պատրիարք Հայ Կաթողիկէներու եւ նախկին Ընդհ. Արքայ Միաբանութեան, ապա Վենետիկի Ծիր. Պատրիարքը՝ Ն. Վ. Տ. Արքիեպիսկոպոս Լուչիանի, Արեւելեան Եկեղեցիներու Ս. Ժողովի Քարտուղար՝ Գրպ. Արք. Մարիոյ Պրիւի, Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ՝ Գր. Սերոբէ Արք. Մանուկեան (Փարիզէն), Ս. Ղազարու եւ Վիեննայի զոյգ Արքահայրները՝ Գրպ. Հ. Պօղոս Վրդ. Անանեան ու Գրպ. Հ. Գրիգորիս Վրդ. Մանեան, Գրպ. Կարապետ Եպս. Ամատունի (Հռոմէն), Ֆրանսայի Հայ Կթգ. Առլ. Կառավարիչ՝ Գրպ. Հ. Նիկողոս Ծ. Վ. Քհէսայեան (Փարիզէն), Հռոմի Լեւոնեան Հայ. Դպրոցի Տեսուչ՝ Գրպ. Ներսէս Ծ. Վ. Սէթեան, Վիեննայի Մխիթարեան Ուխտի Ընդհ. Աթոռակալ՝ Մեծ. Հ. Օդոստինոս Վրդ. Սեքուլեան: Ներկայ էին նաեւ Գեր. Հ. Ժիրայր Վրդ. Թաշճեան (Միլանոյի նախկ. հոգ. հովիւ), Գեր. Հ. Յակոբ Վրդ. Գլընճեան (Միլանիսէն), Արժն. Տ. Սարգիս քհնյ. Սարգիսեան՝ Հոգեւոր Հովիւ Միլանի Հայոց, Ս. Ղազարու Հայրերն ու Ժառանգաւորները, Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի Տեսչական եւ Ուսուցչական կազմերը լրիւ՝ աշակերտներով հանդերձ: Հանդիսասրահ փութացած էին բազմաթիւ ազգայիններ, նախկին աշակերտներ ու բարեկամներ՝ Վենետիկէն եւ չլաւայքներէն, նոյնիսկ հեռաւոր քաղաքներէ: Հո՞՞ զանգուած մը եկած էր Միլանէն, ազգային դանազան Մարմիններու Պետերուն գլխաւորութեամբ: Շնորհակալութեամբ կ'ուզենք նշել հոս նաեւ ներկայութիւնը «Յառաջ» օրաթերթի ազնիւ տնօրէնուհի՝ Տիկ. Արփիկ Միսաքեանի, Փարիզէն: Հիւրերու կարգին նշմարելի էր մասնակցութիւնը Վենետիկի Ս. Մարկոսի տաճարի աւագերէց Կանոնիկոսներու դասին եւ կրօնական բազմաթիւ Հաստատութիւններու Մեծաւորներուն եւ Մեծաւորուհիներուն՝ իրենց ընկերացող միաբանակիցներով:

Խոսալացի բարձրաստիճան ներկաներէն կ'ուզենք յիշատակել յատկապէս Վենետիկի երիտասարդ Քաղաքապետը՝ Տիար Մարիոյ Րիկոյ, Փոխ-Վոյսակալը, Նահանգային Նախագահութեան Փոխանորդը, Ծովակալութեան ներկայացուցիչ՝ Հրպ. Էմիլիոյ Պլազի, Ընդհ. Ոստիկանապետ՝ Անճելոյ Շութոյ, զինուորական ոստիկանութեան հրամանատար՝ Գնդ. Անտրէա Քասթելլանոյ, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Յունաստանի հիւպատոսները, զեղարուեստական եւ մշակութային յուշարձաններու Վերատեսուչ Մարմիններու Գլուխներ,

համալսարանի ուսուցչապետներ, բաղձաթիւ այլ աղնիւ անձնաւորութիւններ ու բարեկամներ:

ՈՒՅԿՈՉՈՒՄ

Հանդիսարահի թաւապատ խորքին, բեմին վերեւ կանգնած էր Մխիթար Սեբաստացին. գունաւոր մողայիքէ մեծ դիմանկար մը, ոսկեղէն շրջանակէն դուրս կարկառած՝ կը խօսէր բոլորիս ու կը պատուամէր զաղտնիքներ սիրոյ, վերածնունդի լոյսով շողշողուն:

Օրուան խօսնակը՝ Հ. Լեւոն Զէքիեան, խտալերէն եւ հայերէն լեզուներով յայտարարեց հանդէսին բացումը, հակիրճ ներկայացնելով յորեկեանին արծարծած համազգային արձագանգը:

Ամէնէն առաջ՝ բեմէն հանդիսապէս հնչեց Ն. Ս. Պօղոս Զ. Սրբղ. Գահանայապետին պատգամը՝ որ կու գար անմահացնել այս բարերաստիկ դարադարձին նուիրական յիշատակը:

Խօսնակը ապա ներկայացուց, հայերէն բնագործ եւ խտալերէն թարգմանութեամբ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վաղդէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի շնորհաւորական օրհնարեր հեռագիրը: Յաջորդեց ընթերցումը Խտալիոյ Վարչապետ՝ Ճովիոյ Անտրէոթիի աղնիւ գրութեան: Այնուհետեւ, խօսնակը հաղորդեց Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Վեհափառի խնդակցական հոգեշունչ մաղթանքը, ինչպէս նաեւ Երուսաղէմի եւ Թուրքիոյ Ամենապատիւ Սրբղ. Պատրիարք Հայրերու, բաղձաթիւ այլ Եպիսկոպոսներու, հուսկ՝ Հայրենիքի եւ Սփիւռքի մշակութային ու կրթական Մարմիններու բերկրառիթ մասնակցութիւնը այս տօնակատարութեան՝ նոյնպէս շնորհազեղ գրութիւններով:

Այս նախերգանքէն ետք՝ բեմ հրաւիրուեցաւ Վենետիկի ազնուաշուք Քաղաքապետը՝ Տիար Մարիոյ Րիկոյ, որ բերաւ քաղաքին սըրտադին ողջոյնը Մխիթարի յիշատակին. գեղեցիկ համազրութեամբ եւ դէպուն խօսքերով՝ համակրելի Քաղաքապետը բնութագրեց Հայերու եւ Վենետիկի միջեւ քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերու բաղձադարեան ժառանգութիւնը, շեշտելով յատկապէս անոր բացառիկ ճոխացումը՝ Մխիթարի եւ իր յաջորդներուն ձեռքով:

Փոխարձակարար, Միաբանութեան ողջոյնի խօսքը կը բերէր Արքեպիսկոպոսութիւնը հանդէպ Վենետիկի եւ առհասարակ հանդէպ Խտալիոյ աղնիւ եւ բարի քաղաքացիներուն, որոնց հիւրասէր բնաւորութիւնը կարելիութիւն ընձեռած էր Եւրոպայի սրտին վրայ մըշակութային հայ կեդրոն մը տեսլծելու: Տպաւորիչ էին մանաւանդ այն խօսքերը, որոնցմով Արքահայրը կը սկսէր իր ճառը, ըսելով՝ թէ այն հոյակապ սանդուղներէն, որոնցմէ մենք բարձրացանք հի-

մա, 260 տարի առաջ՝ դողդոջ քայլերով կը յառաջանար քառասնամեայ համեստ վանական մը, պանդուխտ եւ վտարանդի, հայցելու համար ասպնջականութիւնը Վենետիկի գերագոյն իշխանութիւններուն, հոն՝ ուր այսօր վերստին կը մտնէ յաղթական, փառքի դրասանդներով պսակուած:

Բուռն ծափերու մէջ, յաջորդաբար, բեմ կը բարձրանար Ս. Մարկոսի տաճարին երգչախումբը, որ Գրպ. Մաթթթոյ Ալֆրետոյ Պրավիի ղեկավարութեամբ՝ կը ներկայացնէր հայ սրբազան երգերու գեղեցիկ փունջ մը, բաղձաձայն, դարմանալիօրէն հարապատ հընչումներով ու կատարողական նրբերանգներով: Կոմիտասեան «Տէր, կեցո դու զՀայս» մաղթանքը խլեց իսկոյն մեր արցունքը, սրահին խորհրդաւոր լուծեան մէջ. ապա «Քրիստոս ի մէջ»ը, «Քրիստոս պատարագեալ»ը աղօթքի տաճար դարձուցին այդ փառապանծ դահլիճը. իսկ Եկմալեանի «Սուրբ, սուրբ»ը՝ հրեշտակային վերացում տուաւ մեր հոգիներուն: Շարքը փակուեցաւ Միաբանութեանս պաշտպան Ս. Անտոն անապատականի նուիրուած երգով, որուն բառերն ու եղանակը յորինած է ինքը Մխիթար, եւ զոր այս առթիւ բաղձաձայն դաշնաւորած էր տաղանդաւոր Մաթթթոյ Պրավին:

Հանդէսին կեդրոնական պահն էր. խօսնակը կը խնդրէր Ն. Վ. Տ. Ծիր. Վիլյամսոնէ՝ որ հաճէր ուղղել իր խօսքը: Շուրջ մէկ ժամ տեւող իր հմտալից ու խորիմաց բանախօսութեամբ Վսեմ. Ծիրանաւորը առինքնեց ընտրանի մտաւորական բաղձութիւնը, յուշարձանի նման կերտելով Մխիթարի լուսեղէն դիմաքանդակը, ցայտեցնելով անոր եկեղեցական ըմբռնումներն ու միութեան տեսլականը, որոնք մեծապէս կը գերազանցէին իր ժամանակներու պատմական շրջաձորը: Յուզիչ էր լսել քրիստոնեայ մեծագոյն եկեղեցիին ամէնէն հեղինակաւոր բերաններէն մէկուն՝ նոյնինքն Քրիստոնեաներու Միութեան Քարտուղարութեան Նախագահին կողմէ, թէ հայ ժողովուրդի այս համեստ զաւակը՝ մերօրեայ «էքումենիկ» ըմբռնումներու ռահվիրայ եւ առաջնորդ մըն էր, միջազգային չափանիշով: Վսեմ. Ծիրանաւորը՝ անայլայլ, անսեթեւեթ եւ քննադատի անաչառ աչքով կը դժէր միսիոնարական շարժումին պատմական շրջանակը, Խաչակիրներու օրերէն մինչեւ Փլորենտեան ժողովի տարիները. եւ մինչեւ յետ-Տրիտենդեան եկեղեցաբանութեան գերակշռութիւնը. ու պատմական այս բարդ հոսանքներու մէջէն՝ խճանկարի մը ուրուագծին նման հետզհետէ կը մեծնար, կը յստակուէր, երանդ ու ջիղ կը ստանար Մխիթարի լուսաւոր կերպարը՝ իր տարրօրոյն ինքնուրոյն հըմայքով եւ մարդաբէշունչ հեռատես հայեացքով, զինք շրջապատող անհասկացողութիւններու եւ ընդդիմութիւններու թոհուրոհին ընդմէջէն: Խանդավառ ծափահարութիւններ կ'ողջունէին այս շատ հեղինակաւոր բանախօսութիւնը:

Հանդէսը կը փակուէր հայ ժողովրդական երգերու կատարողութեամբ, դարձեալ Ս. Մարկոսի Տաճարին երգչախումբի խալապի վարպետներուն կողմէ, արժանանալով ներկաներու ջերմ զնահատանքին: Կոմիտասի անմահ քնարէն քաղուած քաղցր ներդաշնակութիւնները լեցուցին դահլիճին մթնոլորտը: Ու բացուեցաւ հայրենի գարունը՝ իր հինաւուրց եւ խօսուն «Վա՛յ, լէ, լէ» ներով, հնչեց ուրախութեամբ քառաձայն դուբաներգը՝ Արարատի ստորոտին քալող լեց զոյգ եղներու նազանքով, պոռթկաց անձրեւի հրճուանքն աւետող եւ բամպակի ցանքը գովերգող ոգեկոչումը, սարը բարձրացող ջրաբեր գեղջկուհիներու զուարթ պարերգին հետ, խանդավառ ոգեւորութիւն ստեղծելով սրահին մէջ: Իսկ Կանաչեանի «Օրօր»ը, անթերի եւ յստակօրէն ներկայացուած, արուեստի գլուխ-գործոց մըն էր, անմոռանալի:

Հայ երգի զմայլելի արձագանքն իրենց սրտին մէջ՝ հանդիսականները կը մեկնէին սրահէն, ժամը 19.30ի ատենները, հետերնին տանելով Մխիթարի նկարով կենդանացած զուսպեղ Յայտադիրը՝ որպէս յիշատակ պատմական:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍԻՐՈՅ ՍԵՂԱՆ

Յաջորդ առաւօտ, Կիրակի, 23 Հոկտեմբեր, Ս. Ղազարի Տաճարին մէջ, Մխիթարի շնորհաբաշխ դամբանին վրայ, դոհարանական Ս. Պատարագ կը մատուցանէր Ն. Գերբը. Տէրութիւն՝ Հմայեակնալով Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Աբրահները: Երգեցողութիւնները ներդաշնակօրէն կը կատարէին Մայրավանքի ժառանգաւորները. մասնաւոր փայլ մը կ'ընծայէր միլանարնակ երիտասարդ ու խոստումնալից երգիչ՝ Ժան Անսըրլեան:

Ս. Պատարագի արարողութեան ներկայ էին երէկ երեկոյեան հանդէսին մասնակցող պաշտօնական հիւրերը, եկեղեցական ու քաղաքական դասերէ: Քաղաքապետին փոխարէն այս անգամ հաճոյքն ունէինք հիւրասիրելու նոյնինքն Վենետիկի Կուսակալը՝ Մեծայարգ Տիար Վալթէր Փելոզի:

Յետ Պատարագի՝ պաշտօնական հիւրերը տեղ կը գրաւէին սիրոյ սեղանի մը շուրջ, Մխիթար Աբրահօր իսկ օրով շինուած պատմական սեղանատան մէջ: Ճաշի ընթացքին՝ կարգացուեցան շնորհակարելի էր ընթացք տալ երէկուան ակադեմիական հանդէսի պահուն:

Ստանդարտ ծախելով ողջունեցան Հայ Կթղ. Նախկին Կաթողիկոս-Պատրիարք՝ Գերբը. Իգնատիոս-Պետրոս Ժ. Պաթանեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից՝ Ն.Ս.Օ. Տ.Տ. Գարեգին Բ. Կաթո-

ղիկոս, Ամնատ. Տ. Եղիշէ Արքայս. Տէրութեան՝ Պատրիարք Հայոց Երուսաղէմի, Ամնատ. Տ. Շնորհք Արքայս. Գալուստեան՝ Պատրիարք Հայոց Թուրքիոյ, Գրչ. Արտակ Արքայս. Մանուկեան՝ Առաջնորդ Թեհրանի Հայոց, Գրպծ. Յովհաննէս Արքայս. Զօլաքեան՝ Հայ Կթղ. Վիճակաւոր Իսթանպուլի, Գրպծ. Ռափայէլ Եպս. Պայեան՝ Հայ Կթղ. Վիճակաւոր Եգիպտոսի, Գրպծ. Յովսէփ Ծ. Վրդ. Գոյունեան՝ Հայ Կթղ. Վիճակաւոր Յունաստանի, Ակադեմիկոս Լեւոն Սալիկեան՝ Տնօրէն Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի, Տիկ. Շուշան-Նիկ Նազարեան՝ բանասիրական գիտութիւնների դոկտոր (Երեւանէն):

Նոյն օրն իսկ, երեկոյեան դէմ, Ս. Ղազարէն հրաժեշտ կ'առնէին Ծիր. Վիլյարանտս եւ Գերբը. Հոգեւոր Տէրը՝ Հմայեակ Կաթողիկոս Կէտիկեան, իրենց հետեւորդներով, փութալու համար Հռոմ, ուր իրենց կը սպասէին Եպիսկոպոսական Սիւնհոգին աշխատանքները:

ՄԻԼԱՆԻ ՀԱՅՈՑ ՆՈՒԵՐԸ

Միլանի Հայոց գաղութը փափաքած էր մասնաւոր յուշանուէրով մը յաւերժացնել դարադարձի այս յորելեանը՝ ոսկեղէն գեղալիք սուրբ սկիւհ մը ձօնելով Ս. Ղազարու: Նուէրին յանձնումը տեղի ունեցաւ վանքի ընթերցասրահին մէջ, ուր խօսք առաւ գաղութին կողմէ՝ ճրտ. Օննիկ Մանուկեան, որ մեծ յուզումով արտայայտեց հայ ժողովուրդի երախտիքի զգացումները հանդէպ Մխիթարի եւ իր աշակերտներուն, որուն մէկ վկայութիւնը կը փափաքի ըլլալ, ըսաւ, Միլանահայերուն կողմէ, այս սկիւհին նուիրումը:

Այդ սրտաղեղ խօսքերուն պատասխանեց Միլանութեան Ընդհ. Աբրահայրը, շեշտելով՝ թէ, ընդհակառակն, ինքն է որ կը փափաքի յայտնել, նաեւ իր բոլոր եղբայրակիցներուն անունով, ամենաջերմ շնորհակալութիւն մը Միլանահայ գաղութին՝ որ իր ներկայութեամբ ճոխացուց հանդիսութիւններուն փայլը: Աւելցուց՝ թէ ամէն անգամ, սուրբ պատարագի պահուն, այս պատուական սկիւհին մէջ նուիրագործող Մեծ Զոհին աղօթքներուն պիտի միանան Միլանահայութեան երկրպագու եւ երկրպագ զգացումները, Մխիթարի անունով հայցելու սէր եւ միութիւն ամենայն Հայոց:

ՄՏԵՐՄԻԿ ՊԱՀԵՐ

Միլենոյն իրիկունը, վանքի մտերմիկ մթնոլորտին մէջ, ընտանեկան սեղանին շուրջ կը բոլորուէին՝ Ս. Ղազարի Հայրերուն հետ՝ Վիեննայի Գրպծ. Աբրահայրն ու Մեծարգոյ Աթոռակալը, միասին խորհրդածելով յորելեանի տպաւորութիւններուն մասին, լուսանորոգ Հիմնադրին շունչով ջերմացած:

Սեղանի պահումը՝ խօսք կ'առնէր Գրպոյ. Մանեան, յայտնելու իր սրտին մեծ գործունակութիւնը եւ եղբայրական ջերմագին դաշնակցութեամբը, ըսելով. «Եկաք, շնորհակալ ենք*». եկանք, դարձեալ շնորհակալ ենք. շնորհակալ ենք եղբայրական այն աննման ընդունելութեան համար՝ որուն արժանացանք: Նման պանդուխտի՝ եկանք մենք ուխտի: Մեզի համար մեծագոյն ուրախութիւնն եղաւ խոնարհիլ մեր հասարակաց Հօր առջեւ ու համբուրել անոր տաք ածիւնները, իր դամբանին վրայ, որ այլեւս գերեզման չէ, այլ՝ սիրոյ անմեռ խորհուրդ մը. որովհետեւ Մխիթար չի մեռնիր՝ քանի կայ Հայ Ազգը, եւ Հայ Ազգը չի մեռնիր՝ քանի կայ Մխիթար: Անոր մեծ դադափառականն ու տեսիլն էր՝ ծառայել իր ժողովուրդին. թող շարունակուի, ուրեմն, այդ ծառայութիւնը՝ մեր բոլորիս միասնական ու եղբայրական գործակցութեամբ»:

Այս խօսք կը տրուէր վաստակաւոր գրող ու բանաստեղծ Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեանի, որ խանդավառօրէն կը դրուատէր Մխիթարի մեծութիւնը՝ ըսելով թէ ան կ'ըլլար անկասկած միջադարձին լայն համբաւով անձնաւորութիւն մը, եթէ պատկանած ըլլար օտար մեծ ժողովուրդի մը. բայց ան ուղեց մնալ իր ժողովուրդին ծոցին մէջ, աշխատիլ միայն անոր համար ու բերել իր լուծան՝ ի նպաստ լուսաւորութեան իր ժողովուրդին, որ թէեւ մեծ չէ թիւով, մեծ է, սակայն, իր հոգեկան ու մշակութային արժէքներով:

Խօսք առաւ նաեւ Լիբանանի Մխիթարեան վանատան Մեծաւոր՝ Հ. Աւետիք Վրդ. Թալաթիեան, որ ուղեւով բերել իր անձնական վկայութիւնը հայ ժողովուրդի յարգանքին ու սիրոյն՝ հանդէպ Մխիթարի, յիշեց Պէյրութի մէջ, իր մեկնումէն առաջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառներուն՝ Խորէն Ա. Կաթողիկոսի եւ Գարեգին Բ. Աթոռակիցիին ջերմ արտայայտութիւնները եւ բերանացի յայտնած սրտագին շնորհաւորութիւնները:

Հուսկ՝ խօսք առաւ Գրպոյ. Անանեան Աբրահայրը, որ սրտագին շնորհակալութիւն յայտնելով Վիեննայի Աբրահայր, չեչտեց՝ իր կարգին՝ Մխիթարի սիրոյ եւ ծառայական ոգին. սէր մը՝ բոլորովին անշահախնդիր, անյիշաչար, որ համակ նուիրում էր, առանց վհատելու ո՛րեւէ խոչն ու դժուարութենէ: Վերջացնելով իր խօսքերը՝ մաղթեց որ այդ սէրը այնքան ծաւալի, որ համակէ ոչ միայն մեզ՝ Մխիթարի բոլոր որդիներս, այլ նաեւ ամբողջ Ազգը:

*) Գրպոյ. Մանեան այս խօսքերով կ'ակնարկէր այն այցելութեան, զոր ամիս մը առաջ կատարած էր Վիեննայի Աբրահայրը՝ Գրպոյ. Պօղոս Վրդ. Անանեան, երթալով Վիեննա, ընկերակցութեամբ Մխիթարեան Կաճառի Վարիչ Հ. Յակոբ Վրդ. Չանթայեանի, մասնակցելու համար Աստուծոյ մայրաքաղաքի Օփերայի պալատին մէջ՝ Մխիթար Աբրահայրի պատիւ տեղի ունեցած երաժշտական շքեղ հանդէսին, բերելով Ս. Ղազարի միաբաններուն ջերմ մասնակցութիւնը:

Ողջերթի ու սիրոյ անկեղծ մաղթանքներով՝ Հոկտեմբերի 24ին, Երկուշաբթի, մեկնեցան քոյր Միաբանութեան ներկայացուցիչները, Եղբայրութեան նարօտ մը տարածելով Ս. Ղազարէն Վիեննա:

ՅԻՇԱՏԱԿԻ ՑՈՅՑԵՐ

Յորեկինական տօնախմբութեան առիթով՝ Ս. Ղազարի վերանորոգ թանգարանին մէջ սարքուած էր մասնաւոր ցուցահանդէս մը Մխիթար Աբրահայր բոլոր հրատարակութիւններուն, ձեռագիրներուն, սեփական վաւերացութիւններուն եւ անձնական դործածութեան իրեղէններուն (կնիք, մատանի, ակիւ, գդակ, եւն...): Ցուցադրուած վաւերացութիւններու կարգին նշելի կը նկատենք՝ քահանայական ձեռնադրութեան եւ վարդապետական գաւազանի ստացման վճարագրերը, Մեթոնի մէջ պատրաստած՝ վանական առաջին կանոնադրութիւնը, յատկապէս՝ իր հոգեւոր ընդարձակ կտակը:

Միեւնոյն յիշատակով լոյս տեսած էին Մխիթարի յորեկինական նոր մետաղներու շարք մը եւ երկու հատորիկներ, գեղատիպ կողբերով, որոնցմէ օրինակներ բաժնուեցան հիւրերուն:

1. Վեց տաղեր Մխիթար Սեբաստացիի հոգեւոր երգարանէն (ի պատիւ Ամենասուրբ Կուսին եւ Ս. Անտոն անապատականի): Խտալերէն թարգմանութիւնը հոգաց Յովսէփ Ֆրասսոն: *Sei Inni sacri di Mechitar di Sebaste, in onore della SS. Vergine e di S. Antonio Abate* (Traduzione italiana a cura di Giuseppe Frasson): Տպ. Վենետիկ - Ս. Ղազար 1977, էջ 53, հայերէն բնագրով միասին:

2. Մխիթար Սեբաստացի՝ Լուսամբոնգ եւ ռահվիրայ - Mechitar di Sebaste Rinnovatore e Pioniere (վերլուծում՝ Մխիթարի անձին ու գործին, հայերէն եւ իտալերէն, հանդերձ մատենագիտական ցուցակով՝ Մխիթարի հրատարակութեանց, նոյնպէս՝ հայերէն եւ իտալերէն): Հատորին սկիզբը դրուած է Ն. Ս. Պօղոս Զ. Սրբգ. Քահանայապետի պատգամը՝ Յորեկեանին առիթով ուղղուած Միւթարեան Միաբանութեան (իտալերէն բնագիրը՝ հանդերձ հայերէն թարգմանութեամբ): Տպ. Վենետիկ - Ս. Ղազար 1977, էջ 80:

ԾԱՆՕԹ. - Մխիթար Աբրահայր ծննդեան 300ամեակի առիթով՝ Հայրենիքի եւ Սփիւռքի ղանազան կեդրոններուն մէջ տեղի ունեցած հանդէսներու մասին, համադրական պատկեր մը ներկայացուցած է «Հայ Ընտանիք» ամսաթերթը (Վենետիկ - Ս. Ղազար), իժ. տարի, 1977, թ. 9-12, էջ 32-35. տե՛ս նաեւ էջ 4-22, 25, 36-39, 84-86: